Հաստատված է

ԳՊՀ գիտական խորհրդի 2010թ.
մայիսի 26-ի նիստում
Ռեկտոր՝ Ռ. Խ. Հակոբյան

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

1. Սույն ընթացակարգը վերաբերում է Գավառի պետական համալսարանում /այսուհետ՝ Համալսարան/ սովորողների ուսումնառության արդյունքների բարելավման քաղաքականության մշակման և իրականացման գործընթացներին:
2. Ուսումնառության արդյունքների բարելավման քաղաքականությունը /այսուհետ՝ Քաղաքականություն/ մշակվում և իրականացվում է Համալսարանի զարգացման ընդհանուր քաղաքականության շրջանակում:
3. Քաղաքականությունը ներառում է Համալսարանում սովորողների ակադեմիական առաջադիմության բարձրացմանն ուղղված բոլոր կառուցակարգերը:
4. Համալսարանում սովորողների համակազմը ներառում է առկա և հեռակա ուսուցման համակարգերում, բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական աստիճաններում սովորող բոլոր անձանց:
5. Բարձրագույն կրթության բոլոր որակավորումների և կրթական ծրագրերի համար Համալսարանում սահմանված են հստակ ձևակերպված կրթական ելքային արդյունքներ՝ գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևով, որոնք ակնկալվում են ուսանողի կրթական ծրագիրը ավարտելուց հետո:
6. Համալսարանը մշակում և կիրառում է այնպիսի կառուցակարգեր, որոնք ուսանողներին հնարավորություն են տալիս ձեռք բերելու նախանշված կրթական ելքային արդյունքները: Համալսարանը իրականացնում է նաև միջոցառումներ և ծրագրեր, ուսումնառության օժանդակ ծառայություններ, որոնք խթանում են ուսանողների մտավոր և անձնային կարողությունների զարգացումը և ապահովում կրթության մատչելիությունը և ուսումնական գործընթացներին մասնակցության հավասար հնարավորությունները բոլոր սովորողների համար:
7. Համալսարանում սովորողների ուսումնառության արդյունքները ստուգվում են ողջ ուսումնական տարվա ընթացքում՝ հրապարակված և հետևողականորեն կիրառվող չափանիշներով՝ համապատասխան կանոնակարգերի և ընթացակարգերի միջոցով:

8. Համալսարանում համակարգված և կանոնավոր կերպով գնահատվում է ուսանողների կողմից կրթական ելքային արդյունքների ձեռքբերում՝ գնահատման բազմագործոն համակարգի միջոցով, որը նպատակաուղղված է սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգման և գնահատման առավել օբյեկտիվ, թափանցիկ և արդյունավետ գործընթացի կազմակերպմանը:
9. Համալսարանում սովորողների ուսումնառության արդյունքները ներառում են ինչպես քննական, այնպես էլ ստուգարքային առարկաներից ցուցաբերված առաջադիմության ցուցանիշները:
10. Համալսարանում սովորողների ուսումնառության արդյունքներն ամփոփվում են յուրաքանչյուր կիսամյակի ավարտին՝ տարին երկու անգամ, ինչպես նաև ուսումնական տարվա ավարտին՝ ըստ մասնագիտությունների, առանձին կուրսերի, հաշվի առնելով յուրաքանչյուր սովորողի առաջադիմությունը:
11. Ուսումնառության ցածր արդյունքներ ունեցող սովորողների հետ տարվում է բացատրական աշխատանք, ծանուցագրեր են ուղարկվում ծնողներին, կարող են կազմվել անհատական աշխատանքի ծրագրեր և ժամանակացույց:
12. Ուսումնառության արդյունքները բարելավելու նպատակով կազմակերպվում են լրացուցիչ պարապմունքներ, ուսանողների կրթական շահագրգռվածության և ինքնուրույն աշխատանքի խթանման, ուսուցման պլանավորման մեջ նրանց դերակատարության մեծացման և կրթական ճկուն այլընտրանքային ուղեգծերի աստիճանական ներմուծման միջոցով:
13. Համալսարանը ուսանողների առաջադիմությունը խթանող նորարարական մեթոդների և տեխնոլոգիաների, ուսանողների պահանջմունքները ուսումնասիրող տարբեր մեթոդների կիրառմամբ մշտապես կատարելագործում է ընթացիկ և ամփոփիչ ատեստավորման համակարգերը և գործընթացները բոլոր կրթական ծրագրերի համար՝ նպատակ ունենալով բարձրացնել ուսումնառության արդյունքների և ուսուցման արդյունավետության գնահատման որակը և հավաստիությունը:
14. Ուսումնառության արդյունքների բարելավումը հաշվի է առնվում՝ սովորողներին խրախուսելիս, ուսման վարձի զեղչ կիրառելիս, հասարակական գործունեության մեջ ներգրավելիս, անվանական կրթաթոշակներ տրամադրելիս, գործուղումներ, վերապատրաստումներ, ուսանողների միջբուհական փոխանակման ծրագրերում ներառելիս: